ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ ԴՊԱՏԱՆ

# ՄՈԼՈՐԵԱԼ ՃԱՄԲՈՐԴԸ ԿԱՄ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՕԹԵԻԱՆ

ԾԻՆԱԳԱՇԱՐԺ ՆԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՄԷՔ ԱԲԱՐՈՎ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂԴԻԵՐԷՆԷ

## ԳԻՆ 1 ՂՐՇ.

251

1909

Ե. [illegible]

Տպագր. [illegible]ԵԱՆ

[illegible]

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

84-7
Մ

# ՄՈԼՈՐԵԱԼ ՃԱՄԲՈՐԴԸ

## ԿԱՄ

## ԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՕԹԵԻԱՆ

ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԿԱՑԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՄԷԿ ԱՐԱՐՈՎ

A 29567

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂՂԻԵՐԷՆԷ

14

1909
Ն. ՊՈԼԻՍ

Տպագր. Ռ. ՍԱԳԱԵԱՆ

ARMENIAN BOOKSTORE
201 WASHINGTON ST.
BOSTON, MASS.

## ԱՆՁԻՆՔ

ԲԱՐԲԱՆԻԿՈՍ.— Գիւղացի:

ՊՐԻՃԻՏԷ.— Իւր կինը:

ԲԱՆԿՐԱՏԻՈՍ.— Պրինիտէի վարժապետ սիրահարը:

ԲԷԹՈՒԱՔՕ.— Ցիսնապետ. «Մոլորեալ նամբորդը»:

ՊՐՈԿՈԼՈՍ.— Ծառայ:

«Անցքն է Ֆրանսայի գիւղերեն մեկուն մէջ:»

# ՄՈԼՈՐԵԱԼ ՃԱՄԲՈՐԴԸ

## ԿԱՄ

## ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՔԵԻԱՆ

---

### ՏԵՍԻԼ Ա.

### ԴԵՂՋՈՒԿ ՍԵՆԵԱԿ ՄԸ

Պրիճիտէ եւ Պրոկոլոս

Պրոկ.— Հասծխա պէս, սիրեցեալ ոչկին Պրիճիտէ, ինք կը յոգնինք՝ մնծերնիս կ'ուտեն, մենք կը մշակենք՝ նոնք կը հնձեն, չենք շնորհք բան մ'ալ վասակինք նէ՝ հաբերնուս կ'առնեն։

—Պրիճ.— Հովը պզտիկ յարդերը կը ցրուէ, սակայն ոակին հաւուէն կը վազէ կ'ըսեն, չէ ս դիտեր։

Պրոկ.— Ասոր հետ մէկտեղ, իրաւունք ալ ունին։

Պրիճ.— Աչխարհքս միշտ ասանկ եղած է։

Պրոկ.— Էրիկդ ինձմէ բաղդաւոր է։

Պրիճ.— Ի՞նչպէս...

Պրոկ.— Մէկտեղ սեղան կը նստիս, ալ ի՞նչ կ'ուզես։

Պրիճ.— Զարմանալի բան. ադկէ ի՞նչ կ'ելլայ։

Պրոկ.— Երկու գլուխ է՝ զատակ չունիք բան չունիք։

Պրիճ.— Քեզի բան մը ըսե՛մ, թող էրիկս հոս ըլլայ, ա՛ւ ոչ բան չեմ ուզեր. (Մէկուսի) ի՞նչ ձանձրացուցիչ մարդ։

Պրոկ.— Նայէ՛, աս գիշեր դուրսը պիտի մնայ։

Պրիճ.— Նորէն կ'ըսեմ թէ ասոր համար շատ սրտուտ եմ։

Պրոկ.— Անա առաջին անգամ կը տեսնեմ կին մը, որ տեղանը չի գալուն վրայ կը սրտոմի։

Պրիճ.— Անկէ հասկցիր որ տունը չգտնուած իրիկունը մարդ կոխելուն պէս՝ անկողին կը մտնեմ. (Մէկ) դեռ չերթա՞ր։

Պրոկ.— Կարելի՞ բան է։

Պրիճ.— Եթէ հոս չըլլայիր, մինչև հիմա քնացած էի. (Մէկուսի) չի հասկնար։

Պրոկ.— Անանկ է նէ՝ ելլեմ երթամ, գլխու ցաւ չըլլամ։

Պրիճ.— Դիշեր բարի տէր Պրոկոլ, շատ շատ բարև էրնանդ։ (Մեկնելու պէս).

Պրոկ.— Գլխուս վրայ, մնաս բարով... չի ժառնաս, Էրիկդ գայ նէ՝ ըսես որ իրեն ըսելիք մը ունիմ։

Պրիճ. (Մեկուսի) — Գոցուելիք քերան, (Բարձր) կ'ըսեմ, կ'ըսեմ, գիշեր բարի։

Պրոկ.— Գիշեր լոյս բարի. (Կը մեկնի)։

## ՏԵՍԻԼ Բ.

### Պրինցիսէ մինակ, ետքը Բէքրաֆօ

Պրիճ.— Ինչ որ է, գնաց, կարծես թէ դիտմամբ կ'ընէր, ազէկ երեսս բռնեց, եթէ թոյլ վարուէի, ով գիտէ մինչեւ երբ հոս պիտի մնար և գլխու ցաւ պատճառէր. (Դուրսէն դուռը կը զարնուի) դուռն է, ով է այն։

Բէթ. (Դուրսէն) —Այս գիշերուան համար զինուորական օթեւան մը։

Պրիճ. (Մեկ.)— Զինուորական օթեւան մը. վայ ինձ, ինչ ընելու եմ։

Բէթ. (Նոյնպէս)— Ճամբէս մոլորեցայ, վասն զի ձիուս ճամբաները գոցեր է. և չպիտի կրնամ տեղս հասնիլ։

Պրի.— Սատուած իմ, հիմա ինչ ընեմ։

Բէթ.— Պիտի բանա՞ք թէ ոչ. դրսէն կը սարսռիմ. դուռ՝։

Պրի.— Բայց... մինակ եմ։

Բէթ.— Մինակ կամ ընկերով եղիք. ձեր սոնուոնոյն մէջ բարեկամն եմ, դուռը բացէք։

Պրի. (Մեկուսի)— Ճար չի կայ, բանալու է. (Կը բանայ ու Բէքրաֆօ կը մտնի)։

Բէթ. (Մտած ատենը)— Մա՛հ և դժոխք. այսչափ դժուար է դուռ մը բանալդ։

Պրի.— Կը վախնայի։

Բէթ.— Սատանան է եկողը որ կը վախնաս. Բարեբանիկոսին տունը սա չէ՞. ահա իր հասցէն։

Պրի.— Ձիշտ, ան է։

Բէթ.— Թէպէտ և գրիգ առաջին անգամ կը տեսնեմ։

Պրի.— Այո՛։

Բէթ.— Իր կինն ըլլալու եւ։

Պրի.— Այո պարոն. (Մեկ.) գոյու տանէր գուռ։

Բէթ.— Շիտակը ըսեմ, Էրիկդ աւելի եւ գրեկ կը սիրեմ։

Պրի. (Մեկ.) Սարդ ձեւքէն ինչպէս ազատելու է։

Բէթ.— Լսէ՛, Դոգլիս, ամուսնոյ ուր է։

Պրի.— Բուսթիէ գիւղը գնաց, այս իրիկուն չի գար։

ԲԷԹ .— ԶլանՏ յարմար տաեղին եկեր եմ քեզի հետ տեսակցելու :

Պրի .— Շնորհակալ եմ, մի՞դք որ քունս եկած է, (Մեկ .) աս պակաս էր :

ԲԷԹ .— Գիւղացիի կերպեր մի բանեցներ :

Պրի .— Յուսամ թէ խոհեմ էք, և այս առիթէն չէք ուզեր օգտուիլ :

ԲԷԹ .— Այդ ալ խօսք է . քիչ մը հեռդ մնամ, քանի մը գաւառի գինի նեստեմ, և մինչև որ քունս գայ՝ երգեմ ու խօսիմ . տակէ առելին չեմ ուզեր :

Պրի .— Շնորհակալ եմ պարոն, բայց իմ աչքերս քունէն ծանրացած են, (Մեկ .) ի՞նչպէս խալբսկելու է սորը ձեռքէն .

ԲԷԹ .— Բայց ես դեռ նոր եկայ, քիչ մը հեռս կենալու եմ :

Պրի .— Ըսածդ ըլլալիք բան չէ . երբ ամուսինս հոս չըլլայ շուտ մը անենակս կը քաշուիմ, ու չի ճանչցած մարդուս հետ չեմ սեղնուիր :

ԲԷԹ .— Տեսնուէ որ ճանչնաս :

Պրի .— Խօսք չե՞ս հասկնար :

ԲԷԹ .— Բարրանիկոսի պէս ամուսին մը ունենալէդ ետքը, յոչափ կոարտուելդ ի՞նչ պիտի ըլլայ :

Պրի .— Ի՞նչ ըսել կ'ուզես պարոն . մենք պարկեշտ կողակիցներ ենք, կը հասկնա՞ս :

ԲԷԹ .— Ահա այսօր կանանց մէջ ամէնէն առաքինին դուք :

Պրի .— Ուզածդ ըսէ, բայց գիտցիր որ այս լեռանց մէջ կը մնակին պարկեշտութիւն ու առաքինութիւն :

ԲԷԹ .— Տանտերկու տարուան զինուոր եմ շատ մը քաղաքներ պտտեցայ, կրնամ ըսել թէ տակաւին նմանդ տեսած չէի :

Պրի .— Գիւղացիկ գաղափար մը ունիս կանանց վրայ :

ԲԷԹ .— Ի՞նչ ընեմ, իրենց գործերէն կը դատեմ :

Պրի .— Լաւ, բայց ձդէ որ գործիս երթամ . այս է քուհրաշդ, այս անդուզէն վեր եկածիդ պէս պառկելու սենեակդ է :

ԲԷԹ .— Քունս եկած չէ :

Պրի .— Իմս եկաւ, գիշեր բարի :

ԲԷԹ .— Անունդ ի՞նչ է :

Պրի .— Պրիճիտէ :

ԲԷԹ .— Ի՞նչ անուշիկ անուն . եկուր Պրիճիտէ, մէկ մէկ աւաթ գինի պարպենք :

Պրի.— Չեմ ուզեր, կը հասկնամ։

Բէթ.— Բայց խմելու է, ճար չի կայ։

Պրի.— Ալ բաւական է, քաջ զօրական մը իր պատիւը կը ճանչնայ։

Բէթ.— Այդ վիրաւորիչ խօսքերուդ պատասխանելով, եւ ալ պիտի ըսեմ որ տանտիկնոջ մը խորհուրդներուն կարօտ չեմ, հասկցար, լաւ, հիմա գնա պառկէ, վաղը յուսամ թէ ուելի քաղաքավար կ'ըլլաս։

Պրի.— Վաղուան համար խօսք չունիմ. դիշեր բարի, ճըրագը մարէ որ վտանգ մը չի պատահի։

Բէթ.— Հոգ մի՛ ըներ։

Պրի. (Մեկ.)— Փառք Աստուծոյ, աղէկ խալըսեցայ (մեկնի)։

Բէթ.— Որո՞ւ մտքէն կ'անցնէր որ տասնակ լեռնային տեղ մը այսպիսի առաքինի կին մը գտնուէր, բայց վաղը տոր եբակը աղէկ մը զննել կ'ուզեմ (սանդուղքն կ'ելլէ)։

## ՏԵՍԻԼ Գ.

Բանկրատիոս դուռը բանալով կը մտնէ. կը գոցէ. սեւ վերարկու մը առած է. ձեռքը ուսելիքով լեցուն կողով մը։

Բանկ. Այս մթութիւնն ինչ ըլլալու է, արդեօք իմ աղուորիկ սիրունիկ Պրիճիտէս քնանալու գացեր է, հոս քիչ մը կենալ պէտք եղաւ, բերածներս կոտրել չեմ ուզեր. (կողովը անկիւն մը դնելէն ետքը) կամացուկ մը երթամ Պրիճիտէիս սենեակին դուռը փնտռեմ։

## ՏԵՍԻԼ Դ.

Նոյն, Պրիճիտէ (մութին)

Պրի.— Մութը կոխեց, կարծեմ թէ քնացած ըլլալու է մեր պարոնը։

Բանկ.— Մօտն ըլլալու եմ, բայց այս խաւարին մէջ բան մը չեմ տեսնար։

Պրի.— Հոս մէկը ըլլալու է. ինչպէս կը դողամ։

Բանկ.— Եթէ չեմ խաբուիր, ոտնաձայն կայ։

Պրի.— Ատ ո՞վ է։

Բանկ.— Ես եմ։

Պրի.— Դու ո՞վ ես։

Բանկ.— Իմ Պրիճիտէս, ես եմ, չճանչցար։

Պրի.— Ինչ անիծեալ սովորութիւն ունիս, տասնակ դատագոլի ներս մտնելու, ըսի քեզի ուրիշ անգամ որ հոս մարդ չեղած տեղն բանալիդ չի գործածես։

Բանկ.— Բայց ամուսնդ դուրսն է. և կարծեմ թէ...։

Պրի։— Զգիտե՞ս թէ վայրկեան մը առաջ ճամբէն մոլորուած յիմնապետ մը եկաւ գիշերը հոս անցնելու։

Բանկ։— Վա՛յ թշուառական։

Պրի։—Կամաց խօսէ, կեցիր երթամ ճրագը առնեմ (կերթայ)։

Բանկ։— Գնա սիրունիկս և անհամբեր քեզի կ'սպասեմ։ Սա յիմնապետին գալն էր պակաս. համբերութիւն կը հատնի. գիտուր ըսածդ կնկան հետ ձգելը աղէկ բան չէ, մանաւանդ Պրիմիտէի պէս աղուոր աչուի մը, ո՛հ... աչքերը չորս բանալու եմ։

Պրի։— Ահա ճրագը։

Բանկ։— Փառք Աստուծոյ որ լոյս աչքով երեսդ տեսայ։

Պրի։— Զայն մի հանէր, այդ գիտուորին վրայ չատ ապահով չեմ։

Բանկ։— Ցոգնած ըլլալու է. կը քնանայ։

## ՏԵՍԻԼ Ե.

Նոյնք և Բէթ. (սանդուղին վրայէն)

Բէթ։— (մեկ.) Վարը մէկը ըլլալու է։

Պրի։— Ի՞նչ աղուոր բաներ բերիր հետդ, Նայիմ։

Բանկ։— Ահա մեր փոքրիկ ճաշը։

Բէթ. (մեկ.) — Լաւ, ես ալ կը ճաշեմ։

Պրի։— Կողովիդ մէջ ինչե՞ր կան։

Բանկ։— Մաքառօնեաններ... բայց ի՞նչ բան... ը՞ն... մա, մա, մա, մա։ (կողովէն հանելով)։

Բէթ. (մեկ.)— Մաքառօնեային սիրահարն եմ։

Բանկ։— Առ քեզի խոզի խորոված աղդր մը։

Բէթ. (մեկ.)— Այդ ալ կը կլլեմ։

Բանկ։— Սա երշիկը սքանչելի է։

Բէթ. (մեկ.)— Սքանչելի. որովհետև գինի կը վերցնէ։

Պրի։— Հիմա խելքս կը թռցնեմ։

Բէթ. (մեկ.)— Ես ալ։

Բանկ։— Սատանք երկու շիշ հին գինի են. որ բարեկամ մը ինձ ընծայեց։

Բէթ. (մեկ.)— Հին գինի... ո՛վ բաղդ։

Բանկ։— Է՛, ի՞նչ կ'ըսես։

Պրի։— Սա մաքառօնեաները տաքցնելու է, քառորդի մը չորթ է։

Բէթ. (մեկ.)— Իրաւ, անոնց պաղը չուտուիր։

Բանկ։— Գնա, ես ամէն բան կարգի կը դնեմ... բայց շուտ եկուր, կոկորդս թմբուկ կը զարնէ։

Պրի.— Երթալ գալը մէկ կ'ըլլայ (Պնակները կը տանի)։

Բանկ.— Շատ ճշմարիտ է, կերակուրը սիրած մարդուդ հետ ուտես նէ՝ ախորժակդ կը տամնապատկի։

Բէթ. (մեկ.)— Իմ ախորժակս բացուելու կարօտ չէ։

Բանկ.— Սեղանը դնենք։

Բէթ. (մեկ.)— Ի՞նչ տաք արիւն մարդ է։

Բանկ.— 2 սկաւառակ, 2 անձեռոց, զոյգ մը գաւաթ, ամէն բան իր տեղն է։

Բէթ. (մեկ.)— Իմ բաժինս պակաս է։

Բանկ.— Երթամ աղ պղպեղ եւայլն բերեմ։

Բէթ. (մեկ.) Սըւոր նայեցէք, տաք տաք ապրանք մը իջեցնելս կուգայ, բայց անուշութեամբ երթանք։

Բանկ.— Ա՛յ, սիրունիկս, ո՞ւչափ ալ ուշացաւ, երթամ նայիմ ի՞նչ կ'ընէ։

Բէթ. (մեկ.)— Մ'երթար, մ'երթար գործդ դէշ կ'ըլլայ։

Բանկ.— Ահա եկաւ (Պրինիտ կը մտնէ)։

Պրի.— Մինչև որ տաքնայ, քիչ մը խօսինք։

Բանկ.— Այս աղուսրիկս, խօսինք, նայինք սա զմնուոր ըսածդ ինտ՞ր մարդ է, սպա՞յ է։

Պրի.— Ձեմ կարծեր։

Բանկ.— Ուրեմն ի՞նչ է։

Բէթ. (մեկ.)— Հիմա պիտի տեսնես։

Պրի.— Ըսա իս անառակին մէկն է։

Բանկ.— Աս ձախորդ եկաւ, անանկները շատ կը սիրեն զուարճանալ։

Բէթ. (մեկ.)— Ես քեզի կը հասկցնեմ ինչ ըլլալս։

Բանկ.— Թէ որ ամուսինդ վաղն ալ չի վերադառնայ՝ եւ սակէ չի պիտի զատուիմ։

Բէթ. (մեկ.)— Ո՞ւր տեղէն բրթաւ սա նորաձեւ տասպեաը։

Պրի.— Բայց վաղը դպրոց չի կա՛յ։

Բանկ.— Ի՞նչ դպրոց, ի՞նչ դպրոց։

Պրի.— Ի՞նչ պիտի ընես, եւ քը չըսես որ...

Բանկ.— Ըսելիքնին ի՞նչ է, վաղուան տեղ դալ Հինդշաբթի կուտամ դասը։

Բէթ. (մեկ.)— Աղէկ դասատու։

Պրի.— Թէ որ մէկը տեսնէր...

Բանկ.— Սաեւորդ խօսքեր մի ըներ, իմ նաղելիս՝ տասնկ պարագայի մէջ պէտք եղած զգուշութիւնները, կամ, չիտակը ընելով՝ վարպետութիւնները դիտեմ։

Բէթ. (մեկ.)— Ես ալ դաս կ'առնեմ, նայինք ինչպէս պիտի պատասխանեմ։

Բանկ.— Վշտացած ըլլամ նէ, բարկութիւնս տղաքներէն կը հանեմ։

Բէթ. (մեկ.)— Այդ տղոց վրէժը ես պիտի լուծեմ։

Պրի.— Նայէ՛. եթէ ձախորդ ըլլայ վախճանը՝ մէյ մ'ալ առնս ոտք չես կոխեր։

Բանկ.— Հիմա նատինք փորերնիս կշտացնենք։

Պրի.— Կեցիր երթամ մաքառօնեան բերեմ։ (Կերթայ)

Բէթ. (մեկ.)— Երկուքիդ ալ ախորժակը հիմա կը գոցեմ։

Բանկ.— Ի՞նչ ախորժակ ունիմ։ (Պրինիտ կը մտնէ)

Բէթ. (մեկ.)— Կ'անցնի, կ'անցնի։

Բանկ.— Ապուրը սառեր, խորտիքը հոն։

Պրի.— Երկրաչափութիւն պէտք չէ, հո՛ս։

Բէթ. (մեկ.)— Սա մարդը վայելուչ բաներ գիտէ։

Բանկ.— Սա մաքառօնէն մէյ մը ա՛ռ նայիմ։

Պրի.— Մատներս պիտի լղեմ։

Բանկ.— Ես ահա ատանկ կը ճարեմ ուտելիքս։

(Դուրսէն դուռը կը զարնուի)

Պրի.— Դուռն է։

Բանկ. (Դող եկած)— Դուռն է մի՞. ո՞վ կրնայ ըլլալ։

Բէթ. (մեկ.)— Ա՛ռ քեզի փորձանք մ'ալ։

Պրի.— Սը՛ոդ, լռէ. (Բարձր) ան ո՞վ է։

Փար.— (Դուրսէն) Ես եմ, Պրինիտէ, բա՛ց։

Պրի.— Էրիկս է. ո՛հ, բանտերնիս բուսաւ։

Բանկ.— Էրիկդ մի՞... ա՛յ նզովից ծնունդ։

Բէթ. (մեկ.)— Սա ի՞նչ տղուտ ատարան։

Պրի.— Կեցիր, ճրագ մ'ալ վառեմ ու հաղորդեմ։

Բանկ.— Վա՛յ կերա՛լուտս ի խուն, լմնցայ։

Փար. (Դուրսէն)— Պրինիտէ, չի բանա՞ս։

Պրի.— Կեցիր սա ճրագը վառեմ, հիմա կը բանամ։ Դուռն ո՞ւր պիտի պահուրտիս։

Բանկ.— Զեմ գիտեր. տենդս բռնեց։

Պրի.— Սա մառանը մտիր, կծկէ։

Բանկ.— Մառանը մի՞. ես որ կը սոսկամ մուկերէ.

Պրի.— Ուրիշ ճար չի կայ, (խորոտը կը բանայ) չո՛ւտ, քեզ տայիմ։

Բանկ.— Գթութիւն, մկան ճրպը լսածիս պէս՝ ձայնս կը ձգեմ։ (Պրինիտ զայն խորոտին մէջ կը հրէ ու կը գոցէ)։

Փար. (Դուրսէն)— Պրինիտէ, ի՞նչ կ'ընես, չես գար։

Պրի.— Ահա եկայ, (դուռը կը բանայ, Էրիկը կը մտնէ)։

Փար.— Ա՛յ սարսափելի. տարի մըն է դուռը կ՚սպասեմ։

Պրի.— Իմ սիրուն Էրիկս, անկողինն էի, մինչև որ հագուիմ, ճրագը վառեմ դամ ըսի.

Բէթ. (մեկ.) Նայեցէք, ինչպէս սուտերը կը շարէ։

Փար.— Հագուելդ ի՞նչ պիտի ըլլար։

Պրի.— Գուցէ հետդ մարդ կար. ցուրտ ալ էր։

Բէթ. (մեկ.) — Ա՛յ թշուառական կին։

Փար.— Ի՞նչ ալ կանուխ պառկեր ես։

Պրի.— Քու բարեկամներէդ յիսնապետ մը, որ ճամբէն մոլորած է եղեր, այս գիշեր եկաւ հոս պատսպարուելու, չուզեցի որ...

Փար.— Աղէկ ես ըրեր։

Պրի.— Վառարանին քովը եկուր որ քիչ մը տաքնաս։

Փար.— Աւելի անօթութիւն կը զգամ քան թէ ցուրտ։

Պրի.— Ո՜հ, տանը մէջ ուտելիք բան չիկայ, ես ալ բերանս բան չի դրած անկողին մտայ։

Բէթ. (մեկ.)— Իրաւ է, խեղճը բան մը չի կերաւ։

Փար.— Խոհանոցը գեանախնձոր կայ, գնա՝ տաք մոխիրի մէջ եփէ՛, գինի ալ կայ, հայ ալ կը գտնեմ, սա Իրիկուն ալ տանկ կ՚անցունենք։

Բէթ. (մեկ.)— Ադ չեղաւ։

Պրի.— Շատ աղէկ. (մեկ.) հոս կենալ չըլլար. (մեկնի)։

Բէթ. (Սանդուղքն իջնալով)— Բարի եկաք, Պ. Փարիսանիկոս։

Փար.— Հէ՞, ադ ո՞վ է։

Բէթ.— Հիւրդ, որ արդէն դքեզ ճանչնալու բարեբախտութիւնն ունեցած էր.

Պրի.— (մտնէ եւ մեկ.).— Այս մարդը հո՞ս, չըլլայ թէ։

Փար.— Այո, կը յիշեմ։

Բէթ.— Կուզայ իր շնորհակալութիւնը յայտնել այս գիշերուան ընդունելութեանդ համար։

Փար.— Շնորհակալ եմ այդ քաղաքավար ընթացքէդ, բայց, կը կարծէի որ այս ժամուս քնացած ես։

Բէթ.— Կը ծիսէի, երբ դրան զարնուիլը լսեցի, (մեկ.) վարպետ տոսիսոս մը ըլլալու համար կնկան մը քով կէս ժամ կենալը բաւական է, (բաւար) իջնելէս վերջը փոքրիկ շնորհք մը կը խնդրեմ ձեզմէ։

Փար.— Խօսեցէք։

Բէթ. — Քովս ուտելիք բան մը չունիմ, սակայն տայի քիչ մը ինձի կերակուր ճարէիք։

Փար. — Ես ալ քու վիճակիդ մէջ եմ, բայց կինս կ'ըսէ որ տանը մէջ ուտելիք բան մը չի կայ։

Բէթ. — Ի՛նչ դժբախտութիւն, սակայն ալ բան չի գտնուի։

Պրի. — Տէր իմ, այս ժամուս, լերան մը գլուխը ի՛նչ ուտելիք պիտի գտնաս։

Բէթ. — Գլուխս պատին զարնելու եմ. (կը մտածէ)

Փար. — Հաւկիթ ալ չի կայ տանը մէջ, կնի՛կ։

Պրի. — Հատ մ'իսկ չի կայ։

Փար. — Ցուսահատելի բան է։

Բէթ. (մեկ.) Հրացանը պիտի պարպեմ. (բարձր) ինչ գդում գլուխս ունիմ եղեր, գտայ, մնվի ուտելիք գտայ։

Փար. — Ի՛նչպէս, ըսէ տեսնենք։

Բէթ. — Վրաս պիտի խնդաք, բայց հոգ չէ, ուտելնէդ ետքը կը գտնանք. 12 տարի է որ ճամբորդութիւն կ'ընեմ։

Փար. — Աթիկա կերակուրի հետ վերաբերութիւն չունի։

Բէթ. Մ'ուճապարեր, Սպանիոյ պատերազմի առենս վըհուկ մը ճանչցայ։

Փար. — Աղ ի՛նչ գէշ բան է։

Բէթ. — Նոյն վհուկը ինձի շատ մը դիւթութիւններ սովրեցուց։

Փար. — Անդին գնա՛, գնա՛. ո՛ւր տեղէն գլխուս փրթար։

Բէթ. — Մի՛ վախնար, իմ դիւթութիւններս միշտ աղէկի կ'ելլեն. ես կարող եմ օրինակի համար դիս անարգող կնկան մը ինքզինքս այնչափ սիրցուցնել՝ որ դայ ոտքերուս խնայ, կնկան մը անհաւատարմութիւնները երեւան կը հանեմ, ուրուականներ կը ցուցնեմ, ամէնց զատ, կարող եմ կերակուրներ վերցնել և ամենահեռաւոր մարդիկը հոս բերել, ուզածիս պէս։

Փար. Աթիկա, պարոն, ինձի չես կրնար կլլեցնել, փորձին նայինք, փորձին։

Բէթ. — Երկու վայրկեանէն փորձով պիտի հաստատեմ. երթամ դիւթական մատեանս ու գաւազանս առնեմ, դու երկու ճրագ պատրաստէ. (սանդուխէն ելնէ)։

Փար. — Դուն ի՛նչ կ'ըսես սոր, կնիկ։

Պրի. — Ես կ'ըսեմ թէ յիմար մ'է և դուն ալ շատ միամիտ մարդ մ'ես որ անոր կարևորութիւն կուտաս։

Փար. — Համբերենք նայինք, ի՛նչ պիտի ընէ։

Բէթ. «Վերադառնալով» Ահա եկայ։

Փար. — Բայց թէ որ չյաջողիս՝ վրադ պիտի խնդանք, եւ քեզի չի վնասեսա։

Բէթ. — Ձեզի բան մը ըսե՞մ, ես պատուաւոր մարդ մը եմ, եթէ խոստումս չի կատարեմ, հարիւր ֆրանք պիտի տուժեմ, բայց եթէ յաջողիմ, կը խոստանա՞ք որ այս իրիկուն ձրիաբար գիս մնուցանէք։

Փար. Կը խոստանամ։

Բէթ. — Ուրեմն փորձի սկսիմ, նախ պէտք է գիտնամ թէ տանը մէջ ո՞վ կայ։

Պրի. «մեկ.» Դէշ սկսաւ։

Փար. — Ո՞վ պիտի ըլլայ, ահա ես, կինս եւ դուռ։

Բէթ. — Տեսնենք քիչ մը եւ քեզի կը խօսինք։ Ես հիմա կը խոստանամ ձեզի հոս բերել քանի մը տեսակ կերակուր. նայինք որի՞ն կերակուրը պիտի վերցնեմ։

Փար. — Ես ի՞նչ գիտնամ։

Բէթ. — Սարձանիոյ գիւղին մէջէն։

Փար. Սարձանիա՞, մեր բնակած գիւղն է. ան, ո՞վ կրնայ ըլլալ արդեօք այդ թշուառը։

Բէթ. — Գիւղիս վարժապետը, որ դաս կրնայ տալ որկրամոլութեան։

Փար. Գիւղին վարժապետը մի՞. ի՞նչ աղէկ բան։

Պրի. «մեկ.» Վարժապետին անունն ալ տուաւ, հիմա կը մոռնամ։

Բէթ. Ձրագները դեղին չըլլալուն՝ այս դեղին թղթով քիչ մը պիտի վարագուրեմ լոյսը։

Փար. Ա՜ա ի՞նչ վախ մը մտաւ սրտիս մէջ։

Բէթ. — Ձեւերէս. շարժումներէս, ըսելիքներէս ու ընելիքներէս բնաւ մի՛ վախնաք։

Փար. Շուտով կը բռնեմ ահա։

Բէթ. — Մոռցայ ըսելու թէ մարդ գտածը ուտելու է։

Փար. — Ուտելիք բան ըլլայ տէ՞ ի՞նչ կ՚ուզէ ըլլայ։

Բէթ. — Երթամ, «Խորը երթայ ծաղրական ձեւեր կ՚ընէ»

Փար. — Դուն ի՞նչ կ՚ըսես, կնի՛կ, չելլես վախնաս։

Պրի. Ես քեզի պէս ապուշ չեմ։

Բէթ. — Կա՜յ ջուրթակ եւ թրմրուկ, ծնծղայ, գաշնակ եւ դաշնամուր, կեցէ՛ք։

Փար. «Սարապով» — Ո՞վ կը կանչէ, կնի՛կ։

Պրի. Սատանաները, որ գինքը տակէ առնեն տանին։

Բէթ. — Փարփանիկոս տակաւին չի ճաշեց։

Փար. — Ո՛չ ըսի, պարոն, տակաւին չեմ ճաշած։

Բէթ .— Հիմա կերակուրներուն անունը պիտի տամ։ Նախ եւ առաջ՝ երշիկ կայ, ակռայիդ կուգայ։

Փար .— Ի՞նչ ըսել է, անով աղէկ կը խմուի, բայց ոյժ տուող բան մը չի կայ։

Բէթ .— Ուրախացի՛ր, խոշոր սնակ մը մաքառանեայ։

Պրի . «մեկ .»— Ա՛յ անօրէն, դիս կը մատնէ։

Փար .— Կնի՛կ, մաքառանեայ կայ եղեր։

Պրի .— Իմ ախորժակս գոցուեցաւ։

Բէթ .— Պարոն Փարփանիկոս, աւելին կայ, խոզի մը խորոված ազդրը։

Փար .— Խոզի մը ազդրը . հիմա կը թացնեմ . ա՛լ բաւական է . մնացածն ալ իրեն տուր որ ուտէ։

Բէթ .— Զէ՛ չէ՛, ունեցածը չունեցածը պիտի վերցնեմ։

Պրիճ . «մեկուսի» Կայծակ իջնէ գլխուդ։

Փար .— Այդչափ քար սիրտ մ՚ըլլար . իրեն ալ ձգէ։

Բէթ .— Ահա մնացածը, աղցան, պանիր, հաց եւ 2 չիշ գինի։

Փար .— Ո՞վ երջանկութիւնս .

Բէթ .— Դուք նայիմ, այս ամէնը ո՞ր կողմ բերել տուի։

Փար .— Ես ի՞նչ գիտնամ։

Բէթ .— Հոս վարի մատանը։

Փար .— Մատան մի՛ . կնի՛կ, քալէ երթանք նայինք։

Պրիճ .— Բանալին վրան չէ՛։

Բէթ .— Դուռաղանս բանալիին դորձը կը տեսնայ։

Պրիճ . «մեկուսի» Օր առաջ լմնայիր։

Փար .— Աս ի՞նչ կարգէ դուրս բան է։ Սըվոր նայեցէք . դուռաղանը բանալիին գործը տեսաւ .

Բէթ .— Ահա բացուեցաւ։

Փար .— Ո՛վ զարմանք .

Բէթ . - Ահա բաժներս կողովին մէջն է . (կողովը վերկ՚առնէ)

Փար .— Երիր կնիկ սեղանը պատրաստէ որ ուտենք .

Պրիճ .— Տեղէս չեմ երերար . խենդենալու մոտ չմնիմ .

Փար .— Անուշութեամբ խօսք չհասկնանէ կերպս կը փոխեմ։

Պրիճ .— Ահա սեղանը, կե՛ր . խմի՛, ճաթի՛, (մեկ .) կ՚տրաժնիդ փորերնուդ մէջ օձեր դառնան։

Փար .— Նստէ՛ կեր նայիմ, աղուորիկս .

Պրիճ . — Ե՞ս ուտեմ, թոյն ըլլայ։

Փար .— Բարկութիւնդ որի է։

Բէթ .— Մի՛ բարկանաք տիկին, բան մը չէ .

Փար . — Իմ սիրունիկս, նստէ՛ կեր ու ինձ մտիկ ըրէ .

Պրիճ . (մեկ .) — Ա՛լ հոմբերութիւնս կը հատնի։

Բէթ.— Բնդ անմեռեմ տիկին Պրիճիտէ.

Փար. (ուտելով) – Ի՞նչ աղուոր երշիկ. ըհ, ըհ, ըհ՛ը՛, սա մաքաւորնեաին ալ համը առնենք.

Բէթ. – Կեցիր որ բամնեմ. այսչափը տիկնոջ, այսչափը քեզի, սա ալ ինձի:

Փար.— Մա՛, մա, մա, մա, սա ի՞նչ համով բան է.

Բէթ.— Վարժապետ ըսածիդ կերակուրը սասնկ կ՚ելլայ անտեսին հետ խօսք-մէկ՝ սա տեղէն ան տեղէն ըսելով՝ բոլոր աղուոր կերակուրները իրենց փորը կը նետեն.

Փար. - Մեր դեղի վարժապետն ալ ըսածիդ պէս է:

Բէթ. – Դո՞ւք ալ վարժապետ ունիք.

Փար,— Այո՛, եւ իմ կողակցիս աղդականներէն է եղեր:

Բէթ.— Սիրուն Պրիճիտէ. սա մեզի պատահածը իրեն ալ պատմէ որ աղէկ մը խնդայ:

Պրիճ.— (մեկուսի) — Ամ սրիկան ուսկի՞ց գլխուս փրթաւ:

Փար.— Ի՞նչ ես եղեր այս իրիկուն կնիկ.

Պրիճ.— Ապո՛ւշ.

Փար.— Ըսէ՛. ըսէ՛. սա սեղանը վերցուր նայիմ. (կինը բարկութեամբ սեղանը կը վերցուցնէ) ի՞նչ կ՚ընես... պարծենալու համար չէ. բայց ես այն երիկներէն չեմ որ կնիկներէն կը խաբուին. այն երիկներէն՝ որոնց գլխուն փորձանք կը բերեն կնիկներնին: (Պրինիտէ մեկնի) ինչ որ է սիրեցեալ բարեկամս, այս ըրածիդ փոխարէն կ՚ուզեմ որ անդամ մը դքեզ համբուրեմ... բայց չէ... կը վախնամ քովդ մօտենալու: միայն թէ քեզմէ բան մը պիտի խնդրեմ.

Բէթ.— Ի՞նչպէս:

Փար.— Սա արհեստդ ինձի ալ սորվեցնես. վասն զի շատ անդամ պէտք կ՚ելլայ ինձի:

Բէթ.—Առաջ վրայ եաբէն կը խօսինք. հիմա սոսկալի գիւտ մը պիտի ցուցնեմ քեզի որ իմ արհեստիս գլուխ գործոցը կ՚համարուի:

Փար.— Սոսկալի գիւտ մը մի՞. հիմակուց սկսայ դողալ:

Բէթ.— Բան մը որ դքեզ պիտի զարմացնէ եւ թերեւս վախցնէ, բայց ես հոս եմ, ամենեին մի վախնար:

Փար.— Շուտ ըրէ. ինչ է նէ զուրցէ:

Բէթ.— Ոչինչ բան. առանդ մէջ ուրուական մը պահած ես, որ քիչ մը հանգստութիւնդ պիտի աւրէ:

Փար.— Ուրուական մի՞... ա՜հ դիտուքիւն.

Բէթ.— Հոգ մի՛ ըներ, ես անիկայ կը վռնտեմ:

Փար.— Բայց օ՞ր կողմն է. ըսէ՛ որ սիրաս հանդարտի:

Բէթ.— Մառանը պահուած է.

Փար. — Մառանդ՝ ... վա՛յ ինձ.
Բէթ. — Բնաւ աչքիդ դարկած չէ՞.
Փար. — Ո՛չ ... բայց ... այո ... երբեմն.
Բէթ. — Բան մը խմացա՞ծ ես:
Փար. — Զգիտեմ. դող մը առաւ զիս:
Բէթ. — Տղայութիւն պէտք չէ. հոս եմ ես:
Փար. — Կեցիր,
Բէթ. — Ի՞նչ կայ.
Փար. «Կը կանչէ» — Պրիճիտէ՛, Պրիճիտէ՛.
Բէթ. — Ի՞նչ կուզես.
Փար. — Կեցիր կըսեմ, Պրիճիտէ՛, Պրիճիտէ՛.
Պրիճ. — (Մտած ատենը) — Ի՞նչ կուզես:
Փար. — Եկուր, հարցուցածիս պատասխան տուր,
Պրիճ. — (Մեկուսի)— Վա՛յ ինձ, թէ որ զիս մատնեց:
Փար. — Տանը մէջ բան մը խմացա՞ր.
Պրիճ — Բա՞ն մը ... ի՞նչ բան:
Փար. — Մինակ եղած ատենդ վայնասուն մը լսեցի՞ր:
Պրիճ. — (մեկուսի) - Ո՛հ հանդարտեցայ. (բարձր) ի՞նչ աղուոր հարցում, չես գիտեր որ այս լեռներուն վրայ հովը տունէն անգամ կ'երևցունէ:
Փար, — Ի՞նչ հով ... ի՞նչ լեռ ... ի՞նչ տուն. մառանին մէջ խոշոր ուրուական մը կայ եղեր:
Բէթ. (մեկուսի)— Ո՛վ հարուած.
Պրիճ. (մեկուսի)— Կորսուեցայ: (Բարձր առ Բէթ.) ա՛հ պարոն ... շնորհք.
Բէթ. — Մի՛ վախնաք տիկին. ես զայն պիտի փախցնեմ:
Պրիճ. — Կ'աղաչեմ որ ...
Բէթ. — Ան տունէն վռնտելս կ'ուզէք, այնպէս չէ՞.
Փար. — Հապա՞. կ'ուզէքն ալ խո՞սք է:
Բէթ. — Ուրեմն սիրա՛ռ Պ. Փարրանիկոս, աղուոր տեղը հասանք, ձեռքդ դաւազան մը ա՛ռ որ ընտծս ընես:
Պրիճ. (մեկուսի) — Խեղճ Բոնկրատիոս:
Փար. — Զաւակայդ արեւուն համար ըլլայ՝ ինծի կռիւ մէջ մի՛ դներ ... ընտանեաց տէր մարդ եմ ես:
Բէթ. Օ՛ն պարապ խօսքեր չուզեր, դաւազանը ձեռք առ և մը վախնար. նշան ըրածիս պէս անոր վրայ ինկիր և աղէկ մը դնեցէ որ մէյ մ'ալ հոս ոտք չի կոխէ: (Դաւազան մը կուտայ):
Փար. — Ձեռքէս եկածը կ'ընեմ, բայց ...
Բէթ. — Ուշադրութիւն ... գործի կը սկսիմ. (մառանին դուռը կը բանայ):

*Փար.* — Ծնկուբներս սկսան դողդղալ։

*Պրիճ.* (մեկուսի) — Հիմա կը մեռնիմ։

*Բէթ.* — Ոգի՛դ ուրուական, կը հրամայեմ, ըրէ՛ ըսածս ո՛ անգնդապետ.

*Փար.* — Ի՞նչ յոսկալի անուն։

*Բէթ.* — Դուրս եկ կըսեմ քեզի, թէպէտեւ պատուհանէն կրնայի հանել՝ բայց գոհ կըլլամ դռնէն վռնտելով. ե՛լ կըսեմ։

*Պրիճ.* — (մեկուսի) — Ա՜հ Բանկրատիոս,

*Բէթ.* — Դուրս ե՛լ, ապա թէ ոչ՝ խայտառակաբար հանեմ քեզ. կը հասկնա՞ս, ահա վերջին անգամ կըսեմ, դուրս ելէ՛ր։ Փարրանիկոս պատրաստ կեցէ՛ր։

*Փար.* — Բայց ծնկուբներս կոտրտեցան, աչքս չեմ կրնար կոր վեր վերցնել։

*Բէթ.* — Փախէ՛ր, դուրս ելէ՛ր. ահա կուգայ, (Բանկրատիոս գլուխը վերարկուով ծածկած մառանէն դուրս կ՚ելլէ եւ Պրինիսեին շուրջը կը դառնայ)։

*Փար.* — Ա՜հ հիմա կը մեռնիմ.

*Բէթ.* Ահա քեզի ճամբայ կ՚ցուցնեմ. քեզ տեսնեմ (կ՚ձեռնէ)։

*Փար.* (ձեռնելով) — Ա՜յ, ա՜յ, ինչ սոսկալի սեւ սառնայ։

*Բանկ.* — Ա՜յ, ա՜յ, օգնութիւն, իմ սիրուն Պրինիսես օգնութիւն.

*Պրիճ.* — (մեկուսի) Հիմա կը մեռնիմ։ Բանկրատիոս կը փոխչի)

*Փար.* — Տեղէս երեւալու կը վախնամ. (կը դողդղայ կեցած տեղը)

*Բէթ.* — Ահա եկայ, մի՛ վախնար, ես եմ։

*Փար.* — Ա՜հ քովէս մի հեռանար. կէս ողջ կէս մեռած կը սեպուիմ։

*Բէթ.* — Դուն էնչ կըսես տիկին Պրինիսէ.

*Պրիճ.* — Դեռ կը հարցունե՞ս։

*Բէթ.* — Փոթորիկը անցաւ, սիրտս առ.

*Պրիճ.* — Այո՛, բայց.։

*Բէթ.* — Ինչ որ է, եղածը եղած է, երթանք հանդչինք, խօսք կուտամ որ ալ քեզ այս գիշեր անհանգիստ չընեմ. մինակ սա փոքրիկ օրինակը կրնանք առնել եղածներէն թէ՝ չատ անգամ կը պատահի որ մէկը ծախքեր կ՚ընէ և ուրիշ մը կը վայելէ։

ՍԴԻՆ ԺԱՐԳՈՑՐԸ

ՀԱՅԿ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴ. ԲԱՆ. № 2
ԱԿԱԴԵՄԻԱ
A 29567

Бук. № Ц. Р.

A II 295

Ա. Շ

...կան գողդղալ։
...մա կը մեռնիմ։
...կան, կը հրամայեմ.

ՉԵԳ

...ն, ԹԻ...

## Թատերական հրատարակութիւնք

գին

Ներկարարը կամ մեղք և ապաշաւ. թատերգութիւն 5 արարուած, գրեց Տ. Փափազեան . . . .

Սրբոյն Զբօսնու (Վիկտոր Հիւգօ). թատերգ. 5 արար. Թէոդորոս Սալհունի կամ Քրիստոնեայ Նահատակը. ողբերգ 4 արարուած, գրեց Ս. Գաբամաճեան .

Վեցու կէս պօրտի ժառանգ մնացած Մտուկը. կատակերգութիւն 1 արարուած, գրեց Գ. Ռշտունի.

Բարեկենդանի Անկուտիները. կատակերգ. 1 արարուած թարգմ. ի գաղղերէնէ. . . . . .

Բռնի Ամուսնութիւն, (Մոլիէր), թարգմ. գաղ. 1 արար

Երանոս Աղգար կամ թապլուքեար վարժապետը, կատակերգ. 1 արար. Տիգրան Փափազեանէ . .

Սէրը բժիշկ (Մոլիէր) կատակերգ. 3 արար. թարգ. Տ. Յ. Տէտէեան . . . . . .

Ակամայ բժիշկը (Մոլիէր) կատակերգութիւն 3 արար. թարգմ. Տ. Յ. Տէտէեան . . . . . .

Ապտէն (Մոլիէր) կատակերգութիւն 5 արար. թարգմ. Տ. Յ. Տէտէեան . . . . . .

Երգարան թատերական, հաւաքածոյ ծիծաղաշարժ երգերու . . . . . .

---

Վերոյիշեալ գրատունը կը վաճառէ զանազան տեսակ թատերգութիւններ եւ զանազան կատակերգութիւններ եւն. եւն. եւն.

Հասցէ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220029567

A II 29567